

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Դպրոցի, մարզչի, ընտանիքի դերը պատանի մարզիկների
ֆիզիկական դատիարակության գործում

Հետազոտող ուսուցիչ՝

Սաթենիկ Ղևոնդյան Գուրգենի

Առարկա՝

Ֆիզկուլտուրա

Ղեկավար՝

Ա. Ծատուրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3-5
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	6-14
ԴՊՐՈՑԻ, ՄԱՐԶԻ, ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ՊԱՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	15-20
ԷԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	21-22
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	23

**ԴՊՐՈՑԻ, ՄԱՐԶՉԻ, ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ՊԱՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից բարձր նվաճումների սպորտի զարգացման պրակտիկան և գրականությունը վկայում է, որ երեխաները ակտիվ մասնակցություն ունեն սպորտում: Հետաքրքիր է, որ որոշ մարզաձևերում երեխաներն ու դեռահասները երբեմն իրենք են սահմանու խաղի կանոնները, կանխորոշում են գնահատման չափանիշներն և վաղ հասակում միջազգային ասպարեզում հասնում են հաջողությունների:

Հարկ է նշել նաև, որ մարզումները պետք է լինեն բազմակողմանի և միշտ պետք է գտնվի մարզիչների և բժշկի հսկողության տակ:

Հայաստանի Հանրապետությունում պատանի մարզիկների նախապատրաստումն իրականացվում է մանկապատանեկան մարզադպրոցներու, մարզախմբերում և մարզական քոլեջներում:

Պատանիների ֆիզիկական դաստիարակության գործընթացում մեծ և պատասխանատու դեր է կատարում ընտանիքը: Ընտանիքն ուսուցման և դաստիարակության համակարգի առաջնային բջիջն է, ընտանեկան կենցաղում պետք է ստեղծվեն բարենպաստ պայմաններ, ապահովել երեխաների առողջությունը, աճը և բնական ֆիզիկական զարգացումը:

Վաղուց ի վեր բանավեճային է այն հարցը՝ թե ինչն է առավել կարևոր երեխայի անձի ձևավորման գործում՝ ընտանիքը, հասարակական դաստիարակությունը, մանկապարտեզ, դպրոց և այլն:

Մինչդեռ ժամանակակից մանկավարժական գիտությունն ունի պնդում, որ անձի զարգացման համար չի կարելի հրաժարվել ընտանեկան դաստիարակությունից, քանի որ նրա գործուն դերն անհամեմատելի են նույնիսկ մանկապարտեզում կամ դպրոցում ստացված որակյալ դաստիարակության հետ:

Սպորտային գորունեության ընթացքում բարձր նվաճումների ձեռքբերման գործում առաջատար ու մոդելավորող դեր ունեն մարզիչները:

Պատանի մարզիկների հետ տարվող աշխատանքում պետք է ներգրավվեն առավել որակյալ, ծավալուն գիտելիքներ ու փորձ ունեցող մարզիչներ, քանի որ ճիշտ իրագործված սկզբնական պատրաստությունը մարզական վարպետության հիմքն է:

Շատ մարզիչների է անհանգստացնում այն հարց, թե ինչպես է պատրաստել բարձրակարգ մարզիկներ:

Մասնագետները պարտավոր են իմանալ և հասկանալ, որ սպորտում առկա են բազմաթիվ հարցեր կապված պատանիների զարգացման և դաստիարակության հետ և պատահական չէ, որ անվանի մարզիչը սպորտում նույնքան հազվադեպ երևոյթ է, որքան անվանի գործիչն արվեստում, գիտության մեջ և տեխնիկայում:

Պատմական փաստերը վկայում է, որ հնուց ի վեր անվանի մարզիկները շատ դեպքերում դարձել են նաև անվանի մարզիչներ:

Պատանիների դաստիարակչական հարաբերությունների համակարգում մարզիչը հանդես է գալիս և մարզիչ, և ուսուցիչ, և ծնող: Նա ոչ միայն փոխանցում է իր մասնագիտական գիտելիքները և կարողությունները, այլև ցույց տալիս իր սեփական պարտականությունների հանդեպ վերաբերմունքի անձնական օրինակը:

Մարզիչի մասնագիտությունը դժվարագույններից է: Նրա գործունեությունը հանգեցած է բարդ հույզերով և սթրեսային իրավիճակներով:

Հետազոտության նպատակը՝ կատարելագործել ընտանիքի մարզիչի և դպրոցի համատեղ գործունեությունը պատանիների ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

Վերոնշյալի համաձայն սահմանվում են հետազոտության հետևյալ խնդիրները. Առաջադրված նպատակի, ինչպես նաև կոնկրետ դրույթների լուծման համար նախատեսվել է հետևյալ հիմնական խնդիրների լուծումը.

1. Բացահայտել պատանիների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստության ցուցանիշները և դրանց առանձնահատկությունները:
2. Ուսումնասիրել ընտանիքում երեխաների հետ տարվող աշխատանքներ ֆիզիկական դաստիարակության հետ կապված:
3. Բացահայտել մարզիչների կողմից կատարվող աշխատանքները ֆիզիկական դաստիարակության գործընթացում:
4. Բացահայտել ընտանիքի դպրոցի և մարզիչի կողմից կատարվող աշխատանքների փոխադարձ կապը:

Հետազոտման հետևյալ մեթոդները. Աշխատանքի նպատակից ելնելով հետազոտության

առջև դրված խնդիրների լուծման համար ընտրվել են այնպիսի մեթոդներ, որոնք առավել արդյունավետ եղանակով կբացահայտեն հետազոտության էությունը, ուստի օգտագործվել են

հետևյալ մեթոդները՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, վերլուծություն և ընդհանրացում, մանկավարժական դիտումներ, սոցիոլոգիական հարցում, մանկավարժական թեստավորում, մանկավարժական գիտափորձ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը մարդկության ընդհանրության ամենահին ձևերից մեկն է: Մարդկային քաղաքակրթությունը իր զարգացման ընթացքում ստեղծել է բազում արժեքներ, որոնցից է ընտանիքը (Կ. Նալչաջյան, 2004): Գիտական գրականությունում (Ա.Գ.Խարչև, Մ.Ս.Մացկովսկի, 1982) ընտանիքը սահմանվում է որպես հասարակության բջիջ, անհատական կենցաղի կազմակերպման կարևորագույն ձև, որը հիմնվում է ամուսնական միության և ազգակցական կապերի վրա: Այսինքն՝ այն հարաբերությունների վրա, որոն գոյություն ունեն ամուսնու և կնոջ, ծնողների և զավակների, եղբայրների և քույրերի, այլ ազգականների միջև, որոնք ապրում են միասին և վարում ընդհանուր տնտեսություն:

Պրոֆեսոր Մախչանյանի միտքը Ն. Հարությունյանը (1997) գտնում է որ «Ելնելով այն բանից, որ ընտանիքը շատ բարդ ու համընդհանուր ուսումնասիրությունների կարևոր օբյեկտ է, առաջարկում ենք մեր հանրապետությունում ստեղծել «Ընտանիք» համակարգային հետազոտությունների կենտրոն: Դա հիմնավորվում է մեզանում ստեղծված խիստ լարված սոցիալ-տնտեսական և հոգեբանական իրավիճակով, ազգային արժեքների և լավագույն ավանդույթների վերակառուցման անհրաժեշտությամբ, մեր ազգի համար ընտանիքի ավանդական կարևոր դերի՝ վերջին տասնյամյակում կրած նվազումով, որի հետևանքներն ավերիչ եղան նաև դաստիարակության գործում»:

Ընտանիքը կատարում է շատ մեծ հասարակական ֆունկցիա.

1. Բնակչության վերարտադրություն.
2. Տնտեսական խնդիրների լուծում.
3. Երեխաների դաստիարակություն.
4. Առողջարարական և ռեկրեատիվ հարցեր.
5. Հասարակության կառավարման ու կարգավորման խնդիրներ:

Դաստիարակության ժամանակակից համակարգում ընտանիք, դպրոց և մարզիչ փոխհարաբերությունները մեծ և պատասխանատու դեր է կատարում պատանիների ֆիզիկական դաստիարակության գործում: Ընտանիքից դպրոց և մանկապատանեկան սպորտ՝ երեխաների ուսուցման առաջին փուլը կոչված է ապահովելու երեխայի ձևավորումը որպես անհատի, ունակությունների զարգացման, հաղորդակցվելու և համագործակցելու, սովորելու կարողությունների և ցանկությունների ձևավորման:

Հարկ է նշել, որ անցման ամեն մի տարիքային շրջան հարուստ է զարգացման թաքնված հնարավորություններով, որոնք պետք է ժամանակին ընտանիքի, դպրոցի և մարզիչի կողմից ի հայտ բերվեն և զարգացվեն: Ահա թե ինչու ներկայումս գիտնականները հատուկ ուշադրություն են դարձնում պատանիների զարգացման պոտենցիալ կարողությունների բացահայտման գործում:

Ժամանակակից մանկավարժությունն ու հոգեբանությունը, մարդաբանությունն ու ֆիզիոլոգիան փաստում են, որ երեխայի մտավոր, ֆիզիկական և բարոյական զարգացման գործում առանձնապես լուրջ արդյունքների կարելի է հասնել պատանեկան տարիքում, երբ դեռևս նոր է ձևավորում մարդ անձնավորությունը, երբ նրա մեջ բարոյական նոր որակները ավելի հեշտ են ձևավորվում, երբ երեխան դպրոցից, ընտանիքից, մարզադպրոցից և շրջապատից արագությամբ է կլանում ամեն ինչ:

Պատանիների անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս տարիքում էական փոփոխություններ են կատարվում մարմնի բոլոր օրգաններում և հյուսվածքներում: Օրինակ՝ ձևավորվում են ողնաշարի բոլոր երեք կորացումները՝ պարանոցային, կրծքային, գոտկային: Բայց կմախքի ոսկրացումը դեռևս չի ավարտվում, որի հետևանքով այն խիստ ձկուն ու շարժուն է: Ֆիզիկական դաստիարակության և շատ մարզաձևերով զբաղվելու մեծ հնարավորություններ է ընձեռում:


Վերը նշվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ ներկա պայմաններում մանկավարժական ստեղծագործությանը տրվում է ազատություն, ուսուցչին, մարզիչին հնարավորություն է ընձեռվում մշակելու և կիրառելու ուսուցման և դաստիարակության առավել արդյունավետ մեթոդական հնարքներ:

Սոցիոլոգիական հետազոտություն: Վերը նշված հիմնախնդրի գիտական տրամաբանական լուծումը առաջադրում է ուսումնասիրել մարզադպրոցներում, հանրակրթական դպրոցում և ընտանիքում երեխաների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման դրվածքը, առողջ ապրելակերպի բաղադրամասերի օգտագործումը լայնածավալ սոցիոլոգիական հետազոտությունների կիրառմամբ:

Մարզադպրոցները, կրթական հաստատությունները և հատկապես հանրակրթական դպրոցը կոչված է, ընտանիքի հետ սերտ համագործակցելով, ապահովել երեխաների համակողմանի ներդաշնակ զարգացումը: Ծնողների կարծիքը և վերաբերմունքը պարզելու համար հարցաթերթիկային հարցում ենք անցկացրել կրտսեր դպրոցականների ծնողների շրջանում:

Մեր կողմից անցկացված հարցումները իրականացվել է Մասիսի N3 հիմնական դպրոցի ծնողների հետ: Այն, որ հայ մայրերի ձգտումը և հետաքրքրությունը երեխայի դաստիարակության հարցերում ավելին է, քան հայերերը, արձանագրվեց նաև մեր հարցման ժամանակ բաշխված հարցաթերթիկների պատասխաններից՝ 69 տոկոս մայրերը, 31 տոկոս՝ հայրերը:

Հարցված ծնողներին դասակարգել ենք նաև ըստ տարիքային խմբերի՝ 10 տոկոսը եղել են մինչև 30 տարեկան, 49 տոկոսը՝ մինչև 35 տարեկան, 33 տոկոսը՝ մինչև 40 տարեկան և 8 տոկոսը՝ 40-ից բարձր:



Գծ. 1 Հարցման մասնակցած ծնողների տարիքային հարաբերությունը ըստ %-ի

Սոցիոլոգիական հարցման ժամանակ առաջնային նշանակություն ունեցող ծնողների կրթական ցենզի որոշումը: Հարցմանը մասնակցած ծնողների 58 տոկոսը ունեցել են բարձրագույն կրթություն, 23 տոկոսը՝ միջնակարգ մասնագիտական, 19 տոկոսը՝ միջնակարգ:

Ուստանի մարզիկների և դպրոցականների ծնողների սոցիալ ազգագրական պատկերը բնութագրող ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց թե տարիքը և թե կրթությունը կարևոր նախադրյալներ և նախապայմաններն են ընտանեկան պայմաններում ակտիվ զբաղվելու երեխաների ֆիզիկական դաստիարակությամբ:

Ուսումնասիրված ընտանիքների մեծամասնությունում՝ 59 տոկոսում եղել է 2 երեխա, 23 տոկոսում՝ 3 երեխա, 11 տոկոսում՝ 1 երեխա, 5 տոկոսում՝ 4 երեխա, 2 տոկոսում՝ 5 երեխա:

Այս հարցերի պատասխանները ցույց են տալիս, որ բազմազավակ ընտանիքները սակավ են, և բնականաբար ծնողները կարող են ավելի մեծ անհատական մոտեցում դրսևորել և 8

ժամանակ տրամադրել երեխաներին: Այս հարցերի պատասխանը ցույց է տալիս նաև մեկ տխուր փաստ: Սակավաթիվ երեխաներ ունեցող ընտանիքներում գրեթե բացակայում է երեխաների միջև փոխհամագործակցությունը, փոխօգնությունը, փոխներգործությունը (Ը.Խ.ԸՅՈպՉ, 1984):

Ընտանեկան ֆիզիկական դաստիարակության հիմնահարցերի ուսումնասիրության ժամանակ առանձնակի նշանակություն ունի բացահայտել, թե ինչպիսի պայմաններ են առկա ընտանիքում երեխայի ֆիզիկական դաստիարակության և ակտիվ հանգստի կազմակերպման, շարժողական կարողությունների ձևավորման, բազմազան շարժողական գործողությունների ուսուցման, նպատակառոտ դրված շարժողական ընդունակությունների մշակման, կոփման միջոցների կիրառման համար:

Այն, որ մարզերում, այդ թվում նաև Մասիս քաղաքում, սակավ են մարզաբազաները, ձևավորված խաղահրապարակները, բացօթյա պարզ մարզասարքերը, վկայում են նաև մեր հետազոտության արդյունքները: Այսպես՝ հայցվողների միայն 10 տոկոսն է նշել, որ բնակավայրին մոտ կա մարզաբազա, 12 տոկոսը՝ բակային մարզահրապարակ, 37 տոկոսը՝ կանաչապատված տարածություն՝ զբոսայգի, 3 տոկոսը՝ լողավազան, 14 տոկոսը նշել է երկու կառույցներ: Հարցվածների 24 տոկոսի բնակավայրի մոտ ոչ մի տեսակի կառույց չկա:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս և առաջադրում, որ երեխաներին ֆիզկուլտուրային շարժման մեջ ընդգրկելու համար խիստ անհրաժեշտ է նպատակառոտ դրված աշխատանք կատարել բնակավայրում, որի նախաձեռնողները պետք է լինեն կրթօջախները, խնողական խորհուրդը, քաղաքապետարանը, հասարակական կազմակերպությունները:

Հաջորդ հարցը դարձյալ վերաբերվում էր ծնողների գիտելիքներին՝ մասնավորապես առողջ ապրելակերպի վերաբերյալ: Հայցվողների բացարձակ մեծամասնությունը՝ 97 տոկոսը, գտնվում է, որ ունի գիտելիքներ և միայն չնչին՝ 3 տոկոսն է խոստովանել, որ չի տիրապետում այդ գիտելիքներին:


Պարզորոշ նկատվում է, որ ծնողները չափազանց բարձր են գնահատել իրենց գիտելիքների մակարդակը: Սոցիոլոգիական հետազոտություններում հաճախ է նշվում այն փաստ, որ նման դեպքում հարցվողները ավելի շատ հակված են տալ դրական պատասխան, քան ընդունելու իրենց գիտելիքների բացակայությունը: Սա ստուգելու նպատակով կազմակերպեցինք լրացուցիչ հարցումներ, որի արդյունքում պարզվեց, որ ծնողները, առողջ ապրելակերպ ասելով, հասկանում են տաք հագուստ, անկառավարելի սնունդ, կոմֆորտ և այլն:

Ներկա ժամանակաշրջանում զգալի բարելավվել է առողջ ապրելակերպի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վերաբերյալ տեղեկատվական միջոցների մուտքը Հայաստան, սակայն վերջիններիս նկատմամբ հետաքրքրությունը ծնողների կողմից մնում է շատ ցածր:

«Ծանոթ են արդյոք ծնողները մասնագիտական այլ գրականությանը, ամսագրերին, որոնք առնչվում են կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակությանը» հարցին ծնողների 47 տոկոսը պատասխանել է այո, 53 տոկոսը՝ ոչ:

Սա վկայում է այն մասին, որ անմիջապես վիճակում է ծնողների կրթության մակարդակը ֆիզիկական դաստիարակության բնագավառից, և այստեղ լուրջ անելիքներ ունեն մանկավարժական բուհերը, գիտահետազոտական ինստիտուտները և անհատ մասնագետները, հեռուստատեսությունը, ռադիոն, լրատվական մյուս միջոցները:

Ընտանեկան ֆիզիկական դաստիարակության իրականացման, երեխաների մոտ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկատմամբ հետաքրքրություն, սեր և սովորույթ ձևավորելու համար կարևոր նշանակություն ունի բնակավայրի բնակիչների ֆիզկուլտուրայի և սպորտային ակտիվությունը: Ուստի ծնողներին առաջադրվեց հարց՝ «Ըստ ձեզ՝ ի՞նչ պետք է անել, որպեսզի ձեր շրջակայքի բնակիչները ձգտեն զբաղվել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով»: Հարցվողների 50 տոկոսը առաջնային է համարել նոր մարզակառույցների կառուցումը, 24 տոկոսը՝ քարոզչական աշխատանքների ընդլայնումը և ակտիվացումը, 11 տոկոսը՝ ֆինանսական ներդրումներ, 5 տոկոսը՝ ծառայության ոլորտի գների մատչելիություն, 4 տոկոսը՝ բարձրացնել ինքնակրթությունը, համապատասխան գիտելիքների ձեռք բերումը, 6 տոկոսը հարցը չեն կարևորել և չեն նշել որևէ պատճառ (զծապատկեր 2):



Գծ. 2 Հարցման մասնակցած ծնողների պատասխանները ըստ %-ի:


Պատանի մարզիկների և դպրոցականների ֆիզիկական դաստիարակության բարելավման կարևոր նախապայմանը դպրոցի և ընտանիքի համագործակցությունն է: Այդ փաստի հետ առանց պատճառաբանելու համաձայնել է հարցված ծնողների 26 տոկոսը, 23 տոկոսը կարևորել է ուսուցչի անձը, քանի որ նա երեխաներին լավ է ճանաչում, ընտանիքի և դպրոցի միջև համագործակցելը կարևորել է 3 տոկոսը:

Երեխաների առողջության ամրապնդման գործում կոփման արարողությունները անփոխարինելի են, մինչդեռ հայ ընտանիքներում սովորաբար այն քիչ է կիրառում: Հարցազրույցից պարզ դարձավ, որ կրտսեր դպրոցականների 71 տոկոսը կոփման արարողություն չի կատարում, 29 տոկոսը կատարում է դեպքից դեպք, որը չի համապատասխան կոփման սկուզբունքների պահպանմանը:

Երեխաները կոփման և առողջության պահպանման կարևոր հանգամանք է նաև երեկոյան զբոսանքը, որի կարևորությունը չեն գնահատում և չեն կիրառում ծնողները: Այդ է փաստում երեխաների անկեղծ խոստովանություն: Այսպես՝ երեխաների միայն 13 տոկոսն է զբոսնում երեկոյան, 23 տոկոսը՝ դեպքից դեպք, 64 տոկոսը չի զբոսնում:


Երեխաների հետաքրքրության շրջանակների և գործունեության լիարժեք ուսումնասիրության համար պարզաբանել ենք նաև նրանց զբաղվածությունը:

Հարցմանը մասնակցած երեխաների 13 տոկոսը հաճախում էր երաժշտական խմբակ, 9 տոկոսը լրացուցիչ սովորում է օտար լեզու, 20 տոկոսը ոչ պարբերաբար զբաղվում է սպորտով, 4 տոկոսը հաճախում է պարի, 7 տոկոսը՝ նկարչության, 7 տոկոսը՝ երգի, 15 տոկոսը՝ ուղղակի խաղում է: Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ երեխաների 25 տոկոսը ոչ մի գործունեությամբ չի զբաղվում. դուրս են մնացել ծնողների և մանկավարժների ներգործությունից:



Գծ. 3 Հարցման մասնակցած երեխաների պատասխանները ըստ %-ի:

Շատ կարևոր էր իմանալ պատանի մարզիկների և դպրոցականների խաղային գործունեությունը: Սակայն ցավոք սրտի հարցման արդյունքները ցույց տվեցին, որ երեխաների 70 տոկոսը օրվա ընթացքում զբաղված են համակարգչային խաղերով: 22 տոկոսը՝ զբաղված է բակային խաղերով, 8 տոկոսը բողոքում էին որ ծնողները չեն թույլատրում դրսում խաղալ: Ի դեպ շատ երեխաներ ցանկություն ունեին բակում խաղալու, բայց բակային խաղահրապարակ չունեին (զճապասկեր 4):



Գծ. 4 Հարցման մասնակցած երեխաների պատասխանները ըստ %-ի:

Այսպիսով՝ դպրոցականների դաստիարակության գործընթացում տուրիզմը դեռ չի գտել իր անհրաժեշտ տեղը: Մինչդեռ տուրիստական արշավների, էքսկուրսիաների ժամանակ է

ստեղծվում հնարավորություն դրսևորել իրենց կարողությունները փոփոխվող պայմաններում, իրավիճակում:

Դպրոցականների մտավոր և հոգեկան բեռնաթափմանը զգալի նպաստում են արձակուրդները, հանգստյան և տոն օրերը:

Հանգստյան օրերին երեխաների 70 տոկոսը ժամանակի մեծ մասը անցկացնում է ծնողների հետ, երբեմն՝ 29 տոկոսը և երբեք՝ 1 տոկոսը: Դպրոցական արձակուրդներին շփման ժամանակ կրճատվում է մինչև 53 տոկոս, երբեմն՝ 45 տոկոս և երբեք՝ 2 տոկոս:

Այսպիսով, հարցումից պարզ է դառնում, որ պատանի մարզիկները և դպրոցականները իրենց հանգստյան և արձակուրդի օրերը մեծամասամբ անցկացնում են ծնողների հետ, ինչը բարենպաստ ժամանակ է ծնողների համար, երեխաների հետ համատեղ զբաղվելու ֆիզիկական վարժությունների տարբեր ձևերով: Սա իր հերթին ոչ միայն կնպաստի երեխաների ֆիզիկական դաստիարակությանը, այլև համատեղ գործունեությունը առավել կամրապնդի ծնողների և իրենց զավակների հոգեկան մերձեցմանը:


Մեր հարցումը ցույց տվեց, որ ելնելով տարվա եղանակներից, աշակերտների գործունեությունը կրում է որոշակի փոփոխություն:

Ամռան արձակուրդներին երեխաների մեծամասնությունը՝ 9 տոկոսը, ավելի շատ սիրում է խաղալ, 17 տոկոսը զբաղվում է ընթերցանությամբ, 14 տոկոսը՝ այլ գործունեությամբ:

Աշնանը երեխաները 36 տոկոսը զբաղվում է խաղային գործունեությամբ, 35 տոկոսը՝ ընթերցանությամբ և 29 տոկոսը՝ այլ գործունեությամբ:

Ձմռանը աշակերտների 44 տոկոսը զբաղվում է խաղալով, ոչը պայմանավորված է ձյան գործոնով և ձմեռային խաղերի հետաքրքրությամբ, 17 տոկոսը դիտում է հեռուստացույց, 39 տոկոսը զբաղվում է ընթերցանությամբ և այլ գործունեությամբ:

Գարնանը աշակերտների գործունեությանը գրեթե չի ենթարկվում փոփոխության: Այսպես՝ 45 տոկոսը զբաղվում է խաղալով, 36 տոկոսը՝ ընթերցանությամբ, 16 տոկոսը՝ այլ գործունեությամբ:



Գծ. 5 Տարվա 4 եղանակների ընթացքում երեխաների զբաղվածությունը միջինով ըստ %-ի:

Դպրոցականների հետաքրքրությունը ֆիզկուլտուրա առարկայի նկատմամբ բավական բարձր է: Մեր այն հարցին, թե ինչ տրամադրությամբ եք մասնակցում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերին, պարզվեց, որ աշակերտների բացարձակ մեծամասնությունը՝ 97 տոկոս, հաճույքով է մասնակցում դասերին, և միայն 3 տոկոսն է ստիպված մասնակցում:

Սակայն հաճախումները «Ֆիզիկական կուլտուրա» դասերին բավականին ցածր տոկոս են կազմում: Նրանցից 57 տոկոսն է պարբերաբար մասնակցում ֆիզիկական կուլտուրայի դասերին, դեպքից դեպք՝ 43 տոկոսը:

Պատճառաբանելով սեզոնային հիվանդությունները, covid 19 տարածվածությունը, շփումը մյուսների հետ:

Անհանգստացնող է այն հանգամանքը, որ ծնողների միայն 12 տոկոսն է մշտապես հետաքրքրվում երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացով, երբեմն՝ 37 տոկոսը և 51 տոկոսը՝ երբեք չի հետաքրքրվում:

Երեխաների 15 տոկոսը նշել է որ իրենց ծնողները զբաղվում են սպորտով և ֆիզիկական կուլտուրայով, 85 տոկոսի ծնողները չեն զբաղվում:

Միևնույն ժամանակ հարցված երեխաները նշում են, որ մեծահասակների 8 տոկոսը բակում զբաղվում է ֆիզիկական կուլտուրայով և սպորտով, 92 տոկոսը՝ չի զբաղվում:

**ՊԱՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՄ, ԴՊՐՈՑԻ, ՄԱՐԶԻՉԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

Պատանի մարզիկների ֆիզիկական դաստիարակության գործում իր ուրույն տեղն ունի ֆիզիկական դաստիարակությունը, որը անքակտելիորեն կապված է մտավոր, բարոյական, գեղագիտական, էկոլոգիական, իրավական և այլն դաստիարակության հետ: Ֆիզիկական դաստիարակությունը պատմական և հասարակական երևույթ է: Գիտնականները փաստում են, որ այն սկսվել է դեռևս քաղաքակրթության արշալույսին՝ տոհմական համայնակարգում: Ինչպես դաստիարակության մյուս կողմերը, այնպես էլ ֆիզիկական դաստիարակության հիմքը դրվում է ընտանիքում:

Ի տարբերություն մտավոր, աշխատանքային, բարոյան և գեղագիտական դաստիարակության այն պետք է սկսվի մինչև մարդու ծնվելը, շարունակվի ամբողջ կյանքում, ներգրավի ազգաբնակչության տարբեր եռատարիքային խմբերը, լինի բազմամյա, անընդհատ և պարբերական գործընթաց:

Մարդը գեղեցիկ է, երբ ֆիզիկականն ու հոգևորը լրացնում են միմյանց: Այսպես, օրինակ, սահմանելով դաստիարակության նպատակը, կարևորում է անձի համակողմանի զարգացումը: «Դաստիարակության միակ նպատակը,-գրում է Ադայանը,-պիտի լինի զարգացնել մարդուն երեք կողմն ի մասին (ֆիզիկական, մտավոր և բանավոր), որպեսզի նա լինի ուժեղ, խելացի և առաքինի»:

Սակայն ներկա ժամանակաշրջանում ընտանեկան ֆիզիկական դաստիարակության ժողովրդական ավանդույթները մեծամասամբ կորսված են, իսկ շատ դեպքերում գործնականում ուղղակի գոյություն չունեն:

Մարզիչը, ուսուցիչը և ծնողը, իրենց ամենօրյա ուշադրության կենտրոնում պահելով առողջ երեխայի մեծացնելու կարևորագույն խնդիրը, դրանով միաժամանակ օժանդակում են աշակերտների հոգևոր զարգացմանը: Չէ՞ որ ֆիզիկապես թույլ երեխային է ամենից առաջ հարկավոր խաղալ, վազել ցատկել: Մինչդեռ շատ հաճախ ծնողներն այդ չեն հասկանում, և իրենք են անմիջապես «դեկավարում» երեխայի ֆիզիկական սխալ դաստիարակությունը, երբեմն նույնիսկ երեխային հիշեցնում են նրա հիվանդության մասին՝ դրանով իսկ ճնշում գործադրելով նրա հոգեկան աշխարհի վրա:

Ծնողների ֆիզկուլտուրային կրթվածության մակարդակի իջեցումը ազդում է իրենց երեխաների ֆիզիկական կուլտուրայի ձևավորման վրա՝ ձևավորելով պասիվ, իսկ երբեմն էլ ժխտական վերաբերմունք ֆիզիկական վարժություններով զբաղվելու նկատմամբ: Այս հանգամանքը թելադրում են անհրաժեշտություն՝ բարձրացնելու հասուն բնակչության կրթվածությունը՝ երեխաներին շարժողական ակտիվության տարբեր տեսակներով ներգրավելու համար, առավել արդյունավետ և նպատակամղված ազդելու նպատակով: Հայտնի է, որ երեխաների ֆիզիկական առողջությունը և շարժողական պատրաստվածությունը շատ հանգամանքներով պայմանավորված է նրանց շարժողական գործունեության կազմակերպմամբ: Միննույն ժամանակ այդ գործընթացը, այսինքն՝ երեխաների առողջությունը ֆիզիկական դաստիարակության միջոցով ամրապնդելու համար անհրաժեշտ է ճիշտ չափավորել բեռնվածությունը: Ներկայումս դպրոցականների ֆիզիկական դաստիարակությունը չի համապատասխանում անհրաժեշտ պահանջներին, շաբաթական երկու-երեք դասը բավական չեն, նրա մոտոր խտությունը ցածր է, դասի նյութը հիմնականում լուծում է կրթական, այլ ոչ թե առողջարարական խնդիրներ: Շատ ծնողներ չգիտեն, որ ֆիզիկական կուլտուրայի դասերը լրացնում են շարժողական պահանջի 22 տոկոսը, իսկ ինչի՞ հաշվին լրացնել մնացած 78 տոկոսը: Ծնողները պետք հստակ գիտակցեն, որ ֆիզիկական վարժությունները ոչ միայն ցանկալի և օգտակար են, այլ անհրաժեշտ և անփոխարինելի միջոց կրտսեր դպրոցականի կյանքում: Այնպես որ ծնողների դերը դպրոցական փուլում ոչ միայն չի նվազում, այլ բարձրացնում , որովհետև անհրաժեշտ է ոչ միայն ուղղել, այլև հասնել և լրացնել բաց թողածը: Երեխաների բուռն աճի ընթացքում ամրապնդվում են ֆիզիկական զարգացման թերությունները: Եթե վերը նշվածին հավելենք, որ մեր հանրապետության նախադպրոցական կրթական հաստատություն հաճախում են այդ տարիքի երեխաների միայն 20 տոկոսը (ՀՀ նախադպրոցական հայեցակարգ 2014), հետևաբար աշակերտների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության կարևորությունը ժամանակի պահանջ է՝ հասարակայնորեն առաջադրված:

Ծնողների ուշադիր վերաբերմունքը երեխաների ֆիզիկական վարժությունների, խաղերի և ֆիզիկական աշխատանքի նկատմամբ ընտանեկան կենցաղի պայմաններում դպրոցին կօգնեն նրանց դաստիարակել բազմակողմանի և ֆիզիկապես լավ պատրաստված անհատի:

Այսպիսով գրական աղբյուրների վերլուծությունը անցկացրած սոցիոլոգիական հարցումը թույլ են տվել եզրակացնել, որ երեխաների հետ համատեղ ֆիզկուլտուրայի պարապունքները առաջացնում են հետաքրքրություն առողջ ապրելակերպի նկատմամբ, ստեղծում են պայմաններ ամուսինների ֆիզիկական, հոգևոր ուժերի վերականգնմանը և կարելի

Է ընտանիքում զարգացնել հավասար իրավունքներ և ձևավորել ընտանեկան դաստիարակության ճիշտ տակտիկա: Եվ որքան էլ դպրոցում լավ կազմակերպված լինի երեխաների ֆիզիկական դաստիարակության գործը, առանց ծնողների օգնության այն ցանկալի արդյունքներ չի տա:

Ընտանեկան ֆիզիկական դաստիարակության ընթացքում առաջադրվում են լուծել հետևյալ խնդիրները.

1. Առողջության պահպանումը և ամրապնդումը.
2. Աշխատունակության բարձրացումը.
3. Օրգանիզմի կոփումը և աղապտացիոն հնարավորությունները.
4. Բազմակողմանի ֆիզիկական զարգացումը.
5. Շարժողական ընդունակությունների մշակումը.
6. Տեսական Գիտելիքների ձեռքբերումը (ձևավորումը).
7. Դաստիարակել հետաքրքրություն և պահանջմունք պարբերաբար զբաղվելու ֆիզիկական վարժություններով.
8. Ձևավորել միջին և ավագ դպրոցականների մոտ կարողություն ընտանեկան պայմաններում միջին և կրտսեր երեխաների հետ անցկացնել պարապունքներ (առավոտյան մարմնամարզություն, ֆիզկուլտ դադար, շարժախաղեր, մարզախաղեր).
9. Շտկելու ֆիզիկական թերզարգացումը:

Նշված խնդիրների լուծումը առաջադրում են հանրակրթական դպրոցին, ֆիզկուլտուրային կազմակերպությունների ցույց տալ աջակցություն և համապատասխան օգնություն (զրույց, միջոցառում, խրախուսում) ծնողներին: Քանզի մանկավարժական դիտումները և հետազոտությունները ցույց են տվել (Ռ.Տ. Մելիքսեթյան, 2001), որ կան ծնողներ, որոնք ֆիզիկական կուլտուրա առարկան համարում են երկրորդական և տարբեր պատճառներ բերելով՝ փորձում են ազատել իրենց երեխաներին դասերից: Դեռ ավելին, եթե ծնողները իրենք չեն զբաղվել և չեն զբաղվում ֆիզկուլտուրայով և սպորտով, կասկածամտություն են դրսևորում և չեն կարող դաստիարակել ուժեղ, տոկուն, դիմացկուն, ֆիզիկապես բազմակողմանի զարգացած անհատ:

Ծնողների ֆիզկուլտուրային կրթվածության մակարդակի իջեցումը ազդում է իրենց երեխայի ֆիզիկական կուլտուրայի ձևավորման վրա: (Գ.Ա.Սարգսյան, 2002, Ա. Գրիգորյան, 2003) հետազոտության արդյունքների, բնակչության վերաբերմունքը ֆիզիկական կուլտուրայով

պարապելուն կախված է ոչ այնքան սոցիալ-ազգագրական բնութագրից, որքան ֆիզիկական կուլտուրայից ունեցած գիտելիքներից ու նրանց խորությունից:

Դեռ ավելին, սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ ազգաբնակչության տեսական գիտելիքների մակարդակը ֆիզիկական կուլտուրայի վերաբերյալ շատ ցածր է, որը թույլ չի տալիս ինքնուրույն և մեթոդապես ճիշտ զբաղվելու ֆիզիկական կուլտուրայով և սպորտով:

Ոչ միայն ուսուցիչները և մարզիչները պետք է մատնանշեն ծնողներին ընտանեկան դաստիարակության մեթոդների և բովանդակության թերությունները, այլ ծնողները մանկավարժներին և մարզիչներին՝ դպրոցի և մարզադպրոցի աշխատանքի բացթողումները, թերացումները: Իհարկե, քննադատությունը ծնողների կողմից պետք է լինի հիմնավորված, արժեվորված և կոնստրուկտիվ:

Հենց ծնողների հետ շփումների ժամանակ պաշտոնական և ոչ պաշտոնական զրույցներ և քննարկումներ և այլն, մանկավարժները կարող են տեսնել և ձևակերպել ոչ միայն ընթացիկ, այլ նաև իրենց գործունեության հեռանկարային խնդիրները: Ծնողների հետ շփումները ունի մի դրական կողմ ասպեկտ ևս. թույլ է տալիս ոչ միայն ստանալ առավել ամբողջական տեղեկություն սովորողի մասին, առավել խորը ուսումնասիրել նրա հետաքրքրությունները և սովորությունները, հակումները և այլ հոգեբանական յուրահատկությունները, այլ նաև հարստացնում է մանկավարժներին նոր ինֆորմացիայով, լայնացնում է մտահորիզոնը, ավելացնում է կուլտուրական զինանոցը, իսկ երբեմն և մանկավարժական գիտելիքների զինանոցը:

Մանկավարժական գրականության մեջ ընտանիքի, մարզիչի և հանրակրթական ուսումնական հաստատության փոխգործունեության ձևերի ցանկը բավականին լայն է՝ անհատական հանդիպումներ, զրույցներ, երկխոսություններ մանկավարժական գիտելիքների պարապմունքներ, ծնողական ժողովներ, բաց դասեր հանդիպումներ հանրահայտ մանկավարժների և մարզիչների հետ, կինոֆիլմերի դիտում և քննարկում, մանկավարժական գրականության բաժանում, մանկավարժական պրակտիկումներ:

Դեռ ավելին՝ ծնողական ժողովները թույլ են տալիս ծնողներին արտահայտելու իրենց կարծիքը, կրել կոլեկտիվ պատասխանատվություն, միասնական պահանջներ՝ ուղղված երեխաների դաստիարակության գործին և ձևավորելով ծնողական կոլեկտիվի մանկավարժական կուլտուրան:

Մարզի և ուսուցչի կողմից անցկացված մանկավարժական զրույցը ծնողներին հարկադրում է մտածել դաստիարակության հարցերի շուրջ, քննադատորեն գնահատել դաստիարակության պրակտիկան, անհրաժեշտ փոփոխություններ մտցնել ընտանիքում երեխայի դաստիարակության պայմանների մեջ, բարելավել դաստիարակության մեթոդները:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում դպրոց, մարզիչ և ընտանիք կապը ունի մեծ նշանակություն: Այն ենթադրում է գիտական հիմնավորված պլանավորման և ծրագրավորման աշխատանքները, անհրաժեշտ նախապայմանների ստեղծում, կարգավորում, վերահսկողություն, որը իր մեջ ներառում է ֆիզիկական դաստիարակության միջոցների, մեթոդների, ձևերի համակարգված օգտագործում՝ նպատակաուղղված առողջության ամրապնդմանը, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստության բարելավմանը: Դպրոց, մարզիչ և ընտանիք համատեղ գործունեության նպատակը պետք է լինի դպրոցականների և մարզադպրոցականների ընդհանուր վիճակի բարելավումը:

Վերջին ժամանակներս ֆիզիկական կուլտուրայի տեսաբանները իրենց աշխատանքներում բազմիցս ընդգծում են ինչպես պատանի մարզիկների, այնպես էլ դպրոցականների կյանքում ֆիզիկական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի տարրերի կիրառման անհրաժեշտությունը, որի իրականացումը մեծապես պայմանավորված է դպրոց ընտանիք համագործակցությամբ, ծնողների վերաբերմունքով, պատրաստության աստիճանով՝ կախված նրանց գիտելիքներից, կարողություններից, արժեքային կողմնորոշումից, որի ձևավորման հիմնական օղակը պետք է հանդիսանա հանրակրթական դպրոցը: Նման արժեքների ձևավորումը բարդ գործընթաց է և պահանջում է դպրոցում և մարզադպրոցում կրթադաստիարակչական աշխատանքների փոփոխություններ այս ուղղությամբ:

Կարևորելով դպրոց, մարզիչ և ընտանիք համագործակցության անհրաժեշտությունը և աշխատանքի արդյունավետության բարձրացման ճանապարհները պատանի մարզիկների ֆիզիկական դաստիարակության գործում, այնուհանդերձ հեղինակները չեն նշում առողջ ապրելակերպի, նրա տարրերի նպատակային կիրառման ուղիները, բացակայում են համապատասխան ծրագրերը: Պատանի մարզիկներին դպրոցականների մոտ առողջ ապրելակերպ ձևավորելու համար հայ իրականության մեջ ընդհանրապես այս ուղղությամբ գիտականորեն հիմնավորված որևէ աշխատանք չի իրականացվել: Առողջ ապրելակերպը կրտսեր դպրոցականների մոտ արդյունավետ ներդնելու համար նախատեսվող աշխատանքները պետք է իրականացնել ամբողջական ճակատով թե՛ ծնողների, թե՛ դպրոցական կոլեկտիվի և թե՛ երեխաների համար նախատեսված մատչելի ծրագրերի առկայությամբ:

Ֆիզիկական դաստիարակության ոլորտում, ինչպես հայտնի է, կիրառվում են մանկավարժության տեսությունում մշակված դրույթները, աշխատանքի հետևյալ ձևերը՝ ծնողական ժողով, գրույցներ՝ խմբային և անհատական, ֆիզիկական կուլտուրա առարկայի բաց դասեր, կոնսուլտացիաները, երկխոսություն և բանավեճ, դասախոսություններ, մեթոդական գրականության բաժնում, հանդիպում ճանաչված մարզիկների, գիտնականների, դասախոսների, մրցավարների, լրագրողների հետ, կինոֆիլմերի տեսաժապավենների դիտում և քննարկում, առաջատար փորձի փոխանակում, դպրոցականների տուն կատարվող այցեր:

Որսեսզի ծնողների հետ տարվող աշխատանքը ավելի մեծ արդյունք տա, անհրաժեշտ է օգտագործել վերը նշված ձևերը զուգակցված, համալիր: Հետևաբար դասավարները բավականին լուրջ աշխատանք պետք է կատարեն ծնողների շրջանում ֆիզկուլտուրային գիտելիքների քարոզչության ուղղությամբ, որը դասավարներից պահանջում է ունենալ համապատասխան պատրաստություն: Մյուս կողմից կրտսեր դպրոցականների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ դասավարների կողմից տարվող աշխատանքների բացակայության դեպքում, ոչ միայն խախտված է, դասավարների կողմից ծնողների խորհրդատվության գործընթացը, այլև հանրակրթական դպրոցի աշխատանքը: Այդ մասին է վկայում առաջատար դպրոցների աշխատանքների ուսումնասիրությունը:

Հարկ է փաստել, որ աշակերտների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրներին վերաբերվող աշխատանքների մեծամասնությունը նվիրված է ընտանիքի, մարզիչի և դպրոցի համատեղ աշխատանքին:

Պատանի մարզիկների և դպրոցականների ֆիզիկական դաստիարակության փորձի փոխանակման ժամանակ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը կամ մարզիչը նախօրոք ի հայտ են բերում հետաքրքրական ու արժեքավոր փորձերը և ծնողների հետ պայմանավորվում փորձի փոխանակմանը նրանց մասնակցության մասին:

Նման աշխատանքի նախապատրաստման և անցկացման ժամանակ սովորաբար մեծ ուշադրություն է դարձվում երեխաների ֆիզիկական դաստիարակության գործում եղած դժվարությունները պարզելուն: Յուրաքանչյուր ընտանիքում ֆիզիկական դաստիարակության գործընթացում շատ դժվարություններ են ծագում: Կարևոր է տալ դրանց հաղթահարման ուղիները: Ընդ որում, պետք է հենվել ընտանեկան դաստիարակության եղած փորձի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գրական աղբյուրների ուսումնասիրությունը, վերլուծությունը և ընդհանրացումը հստակ ուրվագծում է պատանի մարզիկների ներդաշնակ ֆիզիկական զարգացման, ձևավորման, առողջության ամրապնդման, կենսական անհրաժեշտ շարժողական գործողությունների և շարժողական ընդունակությունների հետագա կատարելագործման անհրաժեշտությունը:

Մինչև այժմ գրված աշխատանքները ուղղված են մշակվելու և հիմնավորելու աշակերտների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության դերի, նշանակության, խնդիրների, ձևերի, մեթոդների և միջոցների կիրակոումը ընտանեկան պայմաններում, իսկ ատենախոսական աշխատանքները ուղղված են եղել ուսումնասիրել մարզադպրոցներում պատանի մարզիկների, հանրակրթական դպրոցի երեխաների ֆիզիկական դաստիարակության դրվածքը ընտանիքում, այդ թվում բազմազան դպրոցի և հասարակական կազմակերպությունների համագործակցությանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկատմամբ հետաքրքրության դաստիարակությանը:

Վերը նշված հիմնախնդրի գիտական տրամաբանական լուծումը առաջադրում է ուսումնասիրել մարզադպրոցներում, հանրակրթական դպրոցում և ընտանիքում երեխաների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման դրվածքը, առողջ ապրելակերպի բաղադրամասերի օգտագործումը լայնածավալ սոցիոլոգիական հետազոտությունների կիրառմամբ:

Մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն տվեց հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Պատանի մարզիկների և դպրոցականների ֆիզիկական դաստիարակության խնդիրները ունեն սոցիալական մեծ նշանակություն և պահանջում են գիտականորեն հիմնավորված լուծումներ, այդ թվում դպրոց, մարզիչ և ընտանիք շրջանակում:
2. Մարզիչների ինչպես նաև ուսուցիչների գիտելիքները պատանի մարզիկների և դպրոցականների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ բավարար չէ և չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Պատճառներից մեկն այն է, որ մեր հանրապետության մանկավարժական ուսումնական հաստատություններում և մարզադպրոցներում չեն ուսումնասիրում հատուկ առարկա առողջ ապրելակերպի վերաբերյալ, իսկ դասվարներն էլ այդ բացը չեն լրացնում ինքնակրթությամբ:

Մարզիչները և ուսուցիչները լավ չեն պատկերացնում ընտանիք, մարզիչ և դպրոց համագործակցության խնդիրները, բովանդակությունը, նրա կազմակերպման պայմաններն ու ուղիները: Մինևույն ժամանակ նրանց 78 տոկոսը գտնում է, որ այդ համագործակցության հնարավոր չէ հասնել մեծ արդյունքների ֆիզիկական դաստիարակության գործում:

3. Անբավարար են ծնողների՝ դպրոցական տարիքի երեխաների, ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքները և կարողությունները: Դրա պատճառները մենք տեսնում ենք նրանում, որ բացակայում են ծնողներին համապատասխան գիտելիքներով զինելու ծրագրերը, և այդ բացը ինքնակրթությամբ չի լրացվում:
4. Ընտանեկան պայմաններում ֆիզիկական դաստիարակությունը իրականացնելու անհրաժեշտ նյութատեխնիկական բազան բավարար մակարդակի վրա չէ: Բնակավայրերի մոտ սակավ են մարզաբազաները, ձևավորված խաղահրապարակները և պարզ մարզասարքերը: Ընտանիքների մեծամասնությունում բացակայում է անհրաժեշտ մարզագույքը: Նաև հայտնի պատճառներից էլնելով՝ ծնողները քիչ գումար են հատկացնում երեխաներին ֆիզիկական կուլտուրային և սպորտին հաղորդակցելու համար:
5. Մարզադպրոցներում, դպրոցում, և ընտանիքում չեն պահպանվում առողջ ապրելակերպի պահանջները: Ընտանիքների 6 տոկոսը չեն կիրառվում երեխաների օրվա ռեժիմի գոյություն ունեցող երաշխավորությունները և կանոնները: Շարժողական ակտիվության օպտիմալ ծավալը ապահովված է միայն երեխաների 6 տոկոսի մոտ: Այսպիսով՝ գրական աղբյուրների վերլուծությունն անցկացրած սոցիոլոգիական հարցումը

թույլ են տվել եզրակացնել, որ երեխաների հետ համատեղ ֆիզկուլտուրայի պարապունքներն առաջացնում են հետաքրքրություն առողջ ապրելակերպի նկատմամբ, ստեղծում են պայմաններ ամուսինների ֆիզիկական, հոգևոր ուժերի վերականգնմանը և կարելի է ընտանիքում զարգացնել հավասար իրավունքներ և ձևավորել ընտանեկան դաստիարակության ճիշտ տակտիկա: Փաստում ենք, որ որքան էլ դպրոցում լավ կազմակերպված լինի երեխաների ֆիզիկական դաստիարակության գործուն, առանց ծնողների օգնության այն ցանկալի արդյունքներ չի տա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱԴՈՅԱՆ Ա. Սիրո և ընտանիքի էվոլյուցիան-Երևան-Հայաստան-1990- էջ648
2. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՅՈՒ.Ա., ՍԱՀԱԿՅԱՆ Ա.Ս. Մանկավարժություն ուսումնական ձեռնարկ –Երևան – Մանկավարժ-2005 էջ456
3. ԱՎԵՏԻՄՅԱՆ Լ. Կրթական բարեփոխումների ներկա փուլում դպրոցականների առողջության պահպանման խնդիրները –«Նախաշավիղ» թիվ 1– 2001 էջ 12-13
4. ԱՌԱՔԵԼՅԱՆ Վ.Բ. Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության բնագավառների գիտական հետազոտությունների տեսական հիմունքները –Երևան--
«Սոս և Վոգա»-2001 էջ72
5. ԲԱԲԱՅԱՆ Կ.Գ., ՉԱԹՐՉՅԱՆ Է.Մ. Առողջ ապրելակերպի սոցիալական խնդիրները.Առողջարարական ֆիզիկական կուլտուրա և առողջ ապրելակերպ –Երևան-2004 էջ5-6
6. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Լ. Հայաստանի ազգաբնակչության ֆիզկուլտուրային կրթվածության ձևավորման սոցիալ-մանկավարժական պայմանները. Ատենախոսություն մանկ. գիտ.թեկն. գիտ. աստիճանի հայցման –Երևան-2003 էջ158
7. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՅՈՒ.Գ. Ընտանիքը որպես ֆիզկուլտուրայի արժեքների փոխանցման հիմնական օղակ //Զեկուցումներ. «Մշակույթների երկխոսությունը և անձի ձևավորումը
21-րդ դարի նախշեմին»-1997 էջ128-129
8. ԵՄԻՊՈՎ Բ.Ք. Զրույցներ ծնողների հետ ընտանիքում երեխաների դաստիարակության մասին-Երևան: Հայպետուսմանկհրատ-1957 էջ101
9. ՀԱՄԱԼԻԻ ԾՐԱԳԻԻ Հանրակրթական դպրոցի 1-10-րդ դասարանների աշակերտների Երևան-2003թ.
10. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Ընտանեկան դաստիարակության ժամանակակից խնդիրները //Թեզիսներ «Անչափահասների դաստիարակության խնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում» միջազգային գիտաժողովի զեկուցումների-Երևան-1987 էջ23
11. ՂԱԶԱՐՅԱՆ Ֆ.Գ.Մարդու ֆիզիկական կատարելությունը-Երևան-1987 էջ23
12. ՂԱԶԱՐՅԱՆ Ֆ.Գ. Դպրոցականների շարժողական հատկությունների մշակման առանձնահատկությունները ֆիզիկական կուլտուրայի դասերին-Երևան-Լույս-1981 էջ83
13. ՂԱԶԱՐՅԱՆ Ֆ.Գ., ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Ա. Ֆիզիկական դաստիարակության տեսություն.Դասագիրք /I մաս-Երևան-Պարբերական-2003 էջ168